ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎԻՃԱԿՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ (XIX դարի երկրորդ կես)

Բ. Բ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

XIX դարի 30-ական թվականներին սկիզբ է առնում հայ-ռուսական մշակութային առնչությունների մի նոր ձև, երբ Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունները կարճ ժամանակամիջոցում դառնում են հայ մտավորականության պատրաստման հիմնական դարբնոցներ։ Այդ գործում նկատելի ավանդ ունեին հատկապես Մոսկվայի և Պետերբուրգի համալսարանները։ Հայ երիտասարդության հոսքը Ռուսաստանի, մասնավորապես Մոսկվայի և Պետերբուրգի համալսարաններ ուժեղացավ XIX դ. 50—60-ական թվականներից (40—45 հայ ուսանող) և իր բարձրակետին հասավ դարավերջին, երբ ամենասեղմ հաշվարկով Մոսկվայի և Պետերբուրգի համալսարաններում ուսանում էին շուրջ 180—200 հայ երիտասարդներ[1]։ Դա առաջին հերթին կապված էր հայ իրականության մեջ կապիտալիստական արտադրահարաբերությունների քայլ առ քայլ ուժեղացման, բուրժուական ազգի ձևավորման, նրա ազգային ինքնագիտակցության և մշակութային զարթոնքի պրոցեսի հետ։

Սակայն հարկ է նշել, որ քննության առնվող ժամանակաշրջանի բոլոր հատվածներում, բացառությամբ երևի 50-ական թվականների, հայ ուսանողության թիվը կարող էր ավելի մեծ լինել, եթե հայ ուսանողության քանակական աճի ճանապարհին չլիներ մի շարք էական դժվարություններ, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել երեք խմբի՝ 1. վարչական, 2. կլիմայական և 3. նյութական։ Առաջին երկուսը սույն հոդվածի շրջանակներից դուրս են, որի պատճառով դրանց չենք անդրադառնում, մանավանդ, որ ո՞չ կլիմայական պայմանները և ո՞չ էլ ընդունելության որոշ տարիների սահմանափակումը չեն եղել հայ ուսանողության թվի ավելացումն արգելակող կամ էլ ուսումնառությունը կիսատ թողնելու հիմնական պատճառ։ Արխիվային վավերագրերի և ժամանակի մամուլի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախասովետական շրջանի ինչպես հայ, այնպես էլ այլ ազգերի պատկանող երիտասարդության ճնշող մեծամասնության համար համալսարանական կրթության ճանապարհին ամենամեծ խոչընդոտը նյութական միջոցների հայթայթման պրոբլեմն էր։

Քննության առնվող ժամանակաշրջանում ուման վարձի կտրուկ ավելացումը (մայրաքաղաքային համալսարանների ամեն մի ուսանողի համար 1863 թ.՝ 50 ռ., 1884 թ. համալսարանական կանոնադրությամբ՝ 100 ռ.)։ Ընդ որում այս գումարին պետք է ավելացնել տարեկան առնվազն ևս 200—250 ռ., որ անհրաժեշտ էր ուսանողի կյանքի և կենցաղային ամենահամեստ պահանջները հոգալու համար։ Նշված կանոնադրությունը չունևոր ընտանիքներից ելած շատ ու շատ պատանիների առջև փակեց համալսարանների դռները, միաժամանակ խիստ դժվարացնելով նաև արդեն ընդունված շատ ուսանողների հետագա ուսումնառությունը։ Ցարական կառավարության այս քաղաքականությունը հետապնդում էր ավելի շատ դասակարգային, քան ֆինանսական նպատակներ։ Այն դիպուկ է բնութագրել Մոսկվայի համալսարանի սան, ապառայում բոցաշունչ հեղափոխական Ս. Սպանդարյանը։ «Բարձրագույն կրթությունը,— գրել է նա,— մեզ մոտ թանկ է և անհասանելի, գլխավորապես ժողովրդական լուսավորության մինիստրության քաղաքականության հետևանքով, որն իր առջև խնդիր դրեց կրճատել լուսավորության բարձրագույն օջախներում «խոհարարների որդիների մուտքը»[2]։ «Ինչպես և ինչով է ապրում ուսանողության վիթխարի մեծամասնությունը,— նշում էր Ն. Չեռնիշևսկին,— միայն աստծուն է հայտնի, իսկ մարդկանց համար անըմբռնելի է»[3]։ Բժիշկ Դ. Նիկոլսկին, որը ուսումնասիրել էր 70-ական

---

[1] Հայ ուսանողության թվական, սոցիալական և ռեգիոնալ կազմի մասին մանրամասն տե՛ս Բ. Մանուկյան, Մոսկվայի և Պետերբուրգի համալսարանների հայ ուսանողությունը XIX դարի II կեսին (թվային, սոցիալական և ռեգիոնալ կազմը), («ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1988 № 1, էջ 11—18)։

[2] С. Спандарян, Статьи, письма, документы, Ереван, 1940, с. 166.

[3] Н. Т. Чернышевский, Что делать? М., 1963, с. 86.

թվականների ուսանողության բնակարանային պայմաններն ու սննդի վիճակը, ցավով գրել է. «Ջերմաստիճանը ձմռանը նրանց սենյակներում չի անցնում 4—5°-ից, դրանցում ցուրտ է, մութ և խոնավ, այդ պայմաններում ապրում է ուսանողության մեծ մասը։ Նրանք մի քիչ քաղցած են ճաշից հետո, իսկ մնացած ժամանակ պարզապես սոված են»[4]։

Ուսանողության նյութական թշվառ դրությունը քաշ հայտնի էր ինչպես ռուս, այնպես էլ հայ հասարակությանը։ Ժամանակի հայ լիբերալ մամուլը բազմիցս անդրադարձել է այդ հարցին, միաժամանակ կոչ անելով օգնության ձեռք մեկնել կարիքավոր հայ ուսանողներին։ «Մշակն», օրինակ, գրում էր. «Այն, որ մեր ուսանողության 90 %-ը կարիքավորներ են, և որ նրանցից շատերը այդ կարիքի հետևանքով ենթարկվում են մահացու հիվանդությունների, իսկ շատերն էլ նույն պատճառով կիսատ են թողնում ուսումնառությունը, հազար անգամ ասված և հազար անգամ կրկնված հին ճշմարտություն է»[5]։

Այդ ճշմարտությունը հաստատում են պահպանված արխիվային փաստաթղթերը։ Հայ ուսանողների համարյա յուրաքանչյուր անձնական գործում գտնում ենք բազմաթիվ դիմումներ՝ ուսման վարձից ազատելու կամ էլ նպաստ նշանակելու խնդրանքներով։ Խիստ առատ են նաև այսպես կոչված «աղքատության վկայականները»։ Այսպես, 1873 թ. Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետից ուսման վարձ չմուծելու համար հեռացվում է Աստրախանի բնակիչ, կոլեգիական քարտուղարի որդի Կարապետ Էդիլխանյանը[6]։ Նույն ֆակուլտետի մեկ այլ ուսանող՝ Գարրիել Տեր-Ստեփանյանը, ռեկտորին է դիմում ուսման վարձից ազատվելու և նպաստ ստանալու խնդրանքով ու ներկայացնում է աղքատության վկայական, որտեղ ասված է. «Գորիի բնակիչ հանգուցյալ Տիտուլյար խորհրդական Տեր-Ստեփանյանի այրին բացի տնից, որում ապրում են նաև ամուսնու երկու եղբայրները, և փոքրիկ այգուց, որը լավ բերքի դեպքում կարող է տալ 200 ռ. եկամուտ, այլ միջոցներ չունի և, իրոք, չի կարող մուծել որդու համար 50 ռուբլի ուսման վարձը»[7]։

Նյութական դժվարությունները հաճախ փակում էին հիրավի տաղանդաշատ երիտասարդների առաջընթացի ճանապարհը։ Բնութագրական է Մոսկվայի համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետից Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետ տեղափոխված Արշակ Դավիդովի օրինակը։ Սերված լինելով Սղնախ քաղաքի ավագ սպայի ընտանիքից՝ նա ոսկե մեդալով ավարտում է Թիֆլիսի գիմնազիան, ընդունվում է Մոսկվայի, ապա փոխադրվում Պետերբուրգի համալսարան, ուր և ցուցաբերելով փայլուն ընդունակություններ՝ առաջին չորս քննաշրջաններն ավարտում է միայն գերազանց ընահատականներով։ Սակայն գրկվելով հորից՝ ստիպված է լինում դիմել ռեկտորին հետևյալ խնդրագրով. «Կյանքն ինձ համար դարձել է անտանելի։ Զրկված եմ գոյության բոլոր միջոցներից, խոնարհաբար խնդրում եմ Ձերդ գերազանցությանը նյութական օժանդակություն ցույց տալու մասին, որն ինձ հնարավորություն կտա շարունակելու ուսումնառությունս»[8]։ Կից ներկայացված է աղքատության վկայականը։ Բարեբախտաբար խնդրագիրը հարգվում է, և 1871 թ. նա դառնում է պետական թոշակառու։ Սակայն երկարատև թերասնումը, օրական 4—5 ժամ տևող մասնավոր դասերը հարուստ ընտանիքներում և պետերբուրգյան կլիման արդեն կատարել էին իրենց գործը։ Նույն՝ 1871 թ., ստանալով թոքերի երկկողմանի բորբոքում և պլևրա, բազմախոստում ուսանողը ստիպված ընդմիշտ լքում է համալսարանը[9]։

Համանման խնդրագրերով Պետերբուրգի համալսարանի ռեկտորատին էին դիմել Լևոն Ախշարումովը, Տիգրան Արքեպիսկոպոսյանը, Վասիլի Խուբատյանցը[10], իսկ Մոսկվայի համալսարանի ռեկտորին՝ Դավիթ Կարաքեշիշյանը[11], Հովհաննես Տեր-Գրիգորյանցը[12], Դավիթ Արիստ-

---

4 Д. Н. Николький, Где живет и чем питается русское студенчество («Русский врач», 1911, № 7, с. 298—303).

5 «Մշակ», 1890, № 94։

6 Государственный исторический архив Ленинградской области (այսուհետև՝ ГИАЛО), ф. 14, оп. 3, д. 17659, л. 10.

7 Նույն տեղում, գ. 17507, թ. 11։

8 Նույն տեղում, ֆ. 14, ց. 3, գ. 16500, թ. 13, 18։

9 Նույն տեղում, թ. 21։

10 Նույն տեղում, գ. 26978, 28832, 27175։

11 Центральный Государственный исторический архив г. Москвы (այսուհետև՝ ЦГИАМ), ф. 418, оп. 515, д. 66. Характеристики студентов. л. 137.

12 Նույն տեղում, ց. 76, գ. 273, թ. 3։

ղոմյանը[13], Վարդան Հակոբյանը[14], Գրիգոր Եզիազարյանը[15] և այլք։ Ազնվական ծագում ունեցող, բայց տնտեսապես քայքայվող խավերին պատկանող շատ ուսանողներ նույնպես կարիք են զգացել նյութական օժանդակության։ Այսպես օրինակ՝ պետական գաղտնի խորհրդականի որդի, Ախշարումովների նշանավոր գերդաստանից սերված Պետերբուրգի համալսարանի սան Լևոն Ախշարումովի անձնական գործում գտնում ենք «աղքատության վկայականը» և դրան կից Պետերբուրգի քաղաքագլխի գրությունը, ուր ասված էր, որ նրա «հայրը՝ նախկին զինվորական դատախազ Իվան Ախշարումովը, սեփականություն չունի և իր ստացած տարեկան 2000 ռուբլի թոշակով ստիպված է պահելու ծեր կնոջն ու երեխաներին»[16]։

Ցարական կառավարության ֆինանսական քաղաքականությունը լուսավորության բնագավառում և դրա ուղղակի հետևանքը՝ նյութական անապահով դրությունը, ծնում են խիստ բացասական այն երևույթը, երբ ամեն տարի ուսանողության մի հոծ զանգված թողնում էր ուսումը։ Ըստ պրոֆ. Վ. Գրիգորևի, Պետերբուրգի համալսարանն իր գոյության առաջին հինգամյակում տվել է 2200 շրջանավարտ, մինչդեռ այդ նույն ժամանակամիջոցում հեռացել էին ուսումնառությունը չավարտած մոտ 1000 մարդ[17], իսկ 1885 թ. համալսարանի 2246 ուսանողներից 308-ը ուսումնառությունը թողել էր մինչև ավարտելը[18]։ Պատկերն անմխիթար էր նաև Մոսկվայի համալսարանում, որտեղ 1857—1858 ուս. տարում ուսումնառությունը թողած ուսանողների թիվը հասնում է 183-ի։ Ընդհանուր առմամբ 1851—1858 թթ. ընթացքում համալսարանը թողել է 808 մարդ։ Հատկանշական է, որ նրանց վիթխարի մեծամասնությունը՝ 762 մարդ, սովորում էին իրենց հաշվին, և միայն 46-ն էին պետական թոշակառու[19]։ Բերված թվերը համոզիչ կերպով ապացուցում են դրամական գործոնի վճռորոշ դերը ուսումնառությունը շարունակելու հարցում։ Աչքի է զարնում մի հանգամանք ևս՝ 1856—1857 ուս. տարում Մոսկվայի համալսարանում սովորող բանվոր-արհեստավորական ընտանիքներից սերված 7 ուսանողներից 6-ը ստիպված հրաժեշտ են տվել համալսարանին։ Փաստն ինքնին պերճախոս է։

Ուսումնառություն կիսատ թողած ուսանողության թվի աճի միտումը շարունակվեց նաև հաջորդ տասնամյակներում։ Այսպես, օրինակ, 1900 թ. ռուսաստանյան համալսարանները ուսման կուրսը չավարտած թողեցին 2387 մարդ, իսկ հաջորդ 6 տարիների ընթացքում այդ թիվը դրեթե եռապատկվեց, հասնելով 6514-ի[20]։

Այդ պրոցեսը չշրջանցեց նաև հայ ուսանողությանը, որի 25, ըստ պրոֆ. Ա. Արշարունու հաշվարկների, երբեմն էլ ավելի տոկոսը չէր կարողանում ավարտել համալսարանը[21]։ Այս երևույթը, բնականաբար, մեծ հարված էր հասցնում հայ մտավորականության պատրաստման գործին։

Որո՞նք էին հայ ուսանողության նյութական միջոցներն ու աղբյուրները և ի՞նչ դեր էին խաղում դրանք նրա գոյության պահպանման և ուսումնառության շարունակման գործում։ Ծնողներից ստացվող նյութական օգնությունից բացի, հայ ուսանողների նյութական աղբյուրները պայմանականորեն կարելի է բաժանել չորս խմբի՝ 1. պետական միջոցներ, որոնց մեջ մտնում էին ժողովրդական լուսավորության մինիստրության, ուսումնական օկրուգների և համալսարանական թոշակներն ու նպաստները, 2. մասնավոր միջոցներ՝ հոգևոր և աշխարհիկ զանազան հասարակական կազմակերպությունների և մասնավոր անձանց դրամական հատկացումները և թոշակները, 3. ուսանողական կազմակերպությունների (հայրենակցական միություններ, փոխօգնության դրամարկղներ և այլն) կազմակերպած թատերական ներկայացումներից, երեկույթնե-

---

13 Նույն տեղում, ց. 515, գ. 64, թ. 2։

14 Նույն տեղում, թ. 3։

15 Նույն տեղում, թ. 4։

16 ГИАЛО, ф. 14, оп. 3, д. 26978, л. 14, 24.

17 В. В. Григорьев, Императорский Санкт-Петербургский университет в течение первых пятидесяти лет его существования. Историческая записка, СПб., 1870, с. 313.

18 Годичный акт императорского СПб. университета за 1885 г., с. 10.

19 Отчеты о состоянии и действиях Императорского Московского университета за 1851—1858 гг. (այսուհետև՝ Отчет за ...).

20 А. Е. Иванов, Университетская политика самодержавия накануне первой русской революции 1899—1904 гг., канд. дис. М., с. 203.

21 Ա. Արշարունի, Մոսկվայի համալսարանը և հայ մտավորականությունը, Երևան, 1982, էջ 86։

րից և համերգներից ստացված գումարներ, 4. ուսանողների կողմնակի աշխատանքներից (մասնավոր դասեր, թարգմանություններ, արձակուրդային ամիսներին կատարվող զանազան բնույթի աշխատանքներ) ստացվող դրամական միջոցներ։ Համառոտակի անդրադառնանք դրանցից յուրաքանչյուրին։

Ցարական կառավարությունը, ձգտելով համապատասխան կադրերով ապահովել զարգացող մեքենայական արտադրությունը և անընդհատ ուռճացող բյուրոկրատական ապարատը, ստիպված էր ավելացնել ինչպես բարձրագույն ուսումնական հաստատությունների, այնպես էլ ուսանողների թիվը, մի բան, որն անպայմանորեն ենթադրում էր նաև պետական ֆինանսական հատկացումների, այդ թվում նաև թոշակների ավելացում։ Այս հանգամանքը ուսանողության որոշ մասին հնարավորություն տվեց սովորել նյութական փոքրիշատե բարվոք պայմաններում։ Այսպես, դարի կեսերին (1850—1851 ուս. տարի) Մոսկվայի համալսարանի 821 ուսանողներից պետության հաշվին ուսանում էին 119-ը, ուսումնական զանազան հաստատությունների պանսիոններ (գիշերօթիկ) էին 29-ը, 53 մարդ սովորում էր զանազան կազմակերպությունների (ուսումնական օկրուգներ, մինիստրություններ և այլն) հաշվին, բարեգործական ընկերություններից թոշակներ էին ստանում 24-ը, իրենց հաշվին սովորում էին 469 մարդ կամ մոտ 57,1 %-ը[22]։ Հաջորդ՝ 1851—1852, ուս. տարում նույն համալսարանի 861 ուսանողներից պետության հաշվին ուսանում էին 137, պանսիոններ էին 28, բարեգործական թոշակներ էին ստանում 10, իրենց հաշվին էին սովորում 602 ուսանող կամ 70 %-ը[23]։ Հինգ տարի անց՝ 1856—1857 ուս. տարում Մոսկվայի համալսարանի 1725 ուսանողներից պետության հաշվին ուսանում էին ընդամենը 140, ուսումնական տարբեր հաստատությունների հաշվին՝ 65, բարեգործական թոշակներ էին ստանում 38 և իրենց հաշվին սովորում էին 1465 ուսանող՝ մոտ 84,8 %[24]։ Եվս հինգ տարի անց համալսարանի 1744 ուսանողներից պետության հաշվին էին ուսանում ընդամենը 88 մարդ, պանսիոններ էին 35-ը, Լեհաստանի փոխարքայությունը իր հաշվին պահում էր 54 ուսանող, մոսկովյան ուսումնական օկրուգը՝ 21, Անդրկովկասյան երկրամասը՝ 36, բարեգործական թոշակներ էին ստանում 28 մարդ, իսկ մնացած 1482-ը կամ մոտ 85,5 %-ը սովորում էին իրենց հաշվին[25]։ Ինչպես տեսնում ենք, ընդամենը տաս տարվա ընթացքում, չնայած պետական թոշակառուների թվի աննշան աճին, նրանց տեսակարար կշիռը ուսանողության ընդհանուր քանակի մեջ 27,5 %-ից նվազեց՝ հասնելով 15,02 %-ի։ Դրան համապատասխան ավելանում էր այն ուսանողների թիվը, որոնք պետությունից նյութական որևէ օգնություն չէին ստանում և ապրում էին սեփական միջոցների հաշվին։

Նույնն էր պատկերը նաև Պետերբուրգի համալսարանում, որտեղ այդ ժամանակաշրջանում պետական կամ մասնավոր թոշակներ էին ստանում՝ 1863 թ.՝ 46, 1864 թ.՝ 52, 1865 թ.՝ 58, 1866 թ.՝ 134, 1867 թ.՝ 161, 1868 թ.՝ 178 ուսանողներ[26]։ 1886 թ. Ս. Պետերբուրգի համալսարանի 2280 ուսանողներից թոշակառուներ էին ընդամենը 380 մարդ կամ նրանց 16,6 %-ը[27]։ Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս, Մոսկվայի համալսարանի նման, թոշակառուները կազմում են ուսանողության ընդհանուր թվի աննշան մասը։ Ընդհանուր առմամբ կայսերական բոլոր համալսարաններում պետական թոշակառուների թիվը 1582 էր, որից կովկասյան փոխարքայությանը բաժին էր ընկնում ընդամենը 63 թոշակ։ Դրանք բաշխված էին հետևյալ կերպ. Մոսկվայի համալսարան՝ 45 թոշակ, Օդեսայի՝ 10, Խարկովի՝ 5 և Պետերբուրգի՝ 3[28]։ Բնականաբար, այդ 63 թոշակների սոսկ մի մասն էր բաժին ընկնում հայ ուսանողությանը. 50-ական թվականների սկզբին, երբ հայ ուսանողության թիվն աննշան էր, պետության հաշվին սովորող կամ թոշակառու ուսանողները մեծամասնություն էին կազմում։ Այսպես, օրինակ՝ 1850—1851 ուս. տարում Մոսկվայի համալսարանի 14 հայ ուսանողներից 11-ը ուսանում էին պետության հաշվին կամ էլ թոշակառու էին[29], 1851—1852 թթ.՝ 18 ուսանողներից 11-ը[30]։ Սակայն 60-ական թվականներին, երբ հայ ուսանողության թիվը անընդհատ աճում էր, թոշակառուների և պե-

---

22 Отчет за 1850—51 акад. и 1851 гражданские годы, М., 1851, с. 18.

23 Отчет за 1851-52 акад. и 1852 гражд. годы, М., 1852.

24 Отчет за 1856—1857 акад. и 1857 гражд. годы, М., 1857.

25 Отчет за 1861—62 акад. и 1862 гражд. годы, М., 1862.

26 В. В. Григорьев, նշվ. աշխ., էջ 425։

27 Годичный акт императорского СПб. университета за 1886 г., с. 14.

28 «Փորձ», 1881, № 2, էջ 128—130։

29 Отчет за 1850—51 акад. и 1851 гражд. годы. М., 1851.

30 Отчет за 1851—1852 акад. и 1852 гражд. годы. М., 1852.

տության հաշվին սովորողների թիվը ոչ միայն չավելացավ, այլև որոշ տարիների նույնիսկ նվազեց։ Այսպես, 1860—1861 ուս. տարում Մոսկվայի համալսարանի 45 հայ ուսանողներից թոշակառու և պանսիոներ էին լոկ 10-ը[31], 1865 թ. 31 հայ ուսանողից 5-ը[32], 1878—1879 ուս. տարում՝ 33 հայ ուսանողից 7-ը[33], 1884—1885 թթ.՝ 66 հայ ուսանողից 9-ը[34]։ Ընդհանուր առմամբ կովկասյան փոխարքայության 63 թոշակից 1877 թ. հայ ուսանողներին տրվել է. Մոսկվայի համալսարանում՝ 45 թոշակից 12-ը, Օդեսայի համալսարանում՝ 10-ից 1-ը, Խարկովի համալսարանում՝ 5-ից 1-ը։ Պետերբուրգի համալսարանում կովկասյան ուսումնական օկրուգի 3 թոշակառուների մեջ հայ չկա։ Տաս տարի անց՝ 1887 թ., Պետերբուրգի համալսարանում կովկասցի ուսանողներին հատկացվեց 6 թոշակ[35] 300-ական ռուբլի չափով։ Ընդհանուր առմամբ այդ տարում 21 հայ ուսանող երիտասարդներից պետական թոշակներ էին ստանում 4-ը[36]։

Հայ ուսանողության նյութական ապահովման երկրորդ աղբյուրը մասնավոր անձանց և կազմակերպությունների կատարած դրամական հատկացումներն էին, որոնք հաճախ բավական նկատելի գումար էին կազմում և կրում էին մշտական բնույթ։ Այսպես, օրինակ՝ 1883 թվականից Լազարյան 5 թոշակներին ավելացավ կոմս Միքայել Տարիելովիչ Լորիս-Մելիքովի թոշակը (տարեկան 360 ռուբլի, ընդհանուր 7200 ռուբլի դրամագլխի տոկոսներից)[37], որը տրվում էր կովկասցի ուսանողներին։ Բավական խոշոր գումարներ էին կազմում նաև հայազգի մեծահարուստների դրամական հատկացումները, որոնց մասին հաճախակի հիշատակություններ ենք հանդիպում ժամանակի պարբերականներում։ Այսպես՝ 1894 թ. «Մուրճ» հանդեսը հայտնում էր, որ հունվարին վախճանված Հովակիմ Ադամյանը թողել է 20 000 ռուբլի, որից 5000 ռուբլու տոկոսներով ընկերությունը պետք է թոշակառուներ պահի Ռուսաստանի համալսարաններից մեկում[38]։ Ավելի պատկառելի էր ղրիմահայ մեծահարուստ Բերբերյանի ավանդը՝ Մոսկվայի համալսարանի ղրիմահայ 4 չքավոր ուսանողների տարեկան 400-ական ռուբլի թոշակ հատկացնելու մասին, միաժամանակ նրանց պարտավորեցնելով ավարտելուց հետո երկու տարի ծառայել տավրիկյան նահանգի հայ դպրոցներից մեկում[39]։

Հայ առաջավոր մտավորականները, չբավարարվելով պարբերականներում հայ չքավոր ուսանողներին օգնելու կոչերով, իրենք ևս իրենց սահմանափակ միջոցներից օգնության ձեռք են մեկնել նրանց։ Ուսանողությանը օգնելու ջերմ կոչերով հանդես են եկել Ա. Ծատուրյանը[40], Մուրացանը[41]։ Հայ չքավոր ուսանողների օգտին դրամական հատկացումներ են արել հայ վաստակաշատ արևելագետ Ք. Պատկանյանը[42] և այլք։ Այս գործում խիստ դրական մասնակցություն է ունեցել հայ մեծանուն ֆիզիոլոգ Վ. Վարդանովը, որը, շուրջ 30 տարի լինելով Պետերբուրգի հայ եկեղեցական խորհրդի անդամ, աշխատում էր խորհրդի գումարներով մշտական օգնություն ցույց տալ կարիքավոր հայ ուսանողներին։ Այդ են վկայում ժամանակակիցների, մասնավորապես ՀՍՍՀ ժողովրդական արտիստ Վ. Միրզոյանցի գրավոր հիշողությունները, որոնցում նա վկայում է, որ ինչպես ինքը, այնպես էլ ժամանակի բազմաթիվ ուսանողներ նպաստ և օգնություն են ստացել Վ. Վարդանովի մարդասիրական վերաբերմունքի շնորհիվ և կարողացել են իրենց ուսումը շարունակել[43]։ Վ. Վարդանովն իր այդ ազնիվ ձգտման մեջ չէր կարող չհանդիպել կղերականության դիմադրությանը, որը, հաճախ ուրիշներին կոչ անելով բարեգործության, ձգտում էր, սակայն, չդիպչել իր գումարներին կամ էլ այդ «բարեգործությունը» կատարում էր այնպիսի աննշան չափերով, որը դժվար էր անվանել փոքրիշատե ռեալ օգնություն։ Այսպես, Պետերբուրգի հայկական եկեղեցին, լինելով ամենահարուստ թե-

---

31 Отчет за 1860—1861 акад. и 1861 гражд. годы, М., 1861.

32 Алфавитный стисок студентов Московского университета на 1865 г., М., 1865.

33 ЦГИАМ, ф. 14, оп. 515, д. 12.

34 Նույն տեղում, գ. 15։

35 «Փորձ», 1881, № 2, էջ 128—130։

36 ГИАЛО, ф. 14, оп. 3, д. 10428, л. 73.

37 Նույն տեղում, թ. 28։

38 «Մուրճ», 1894, № 1, էջ 164—165։

39 «Մուրճ», 1895, № 5, էջ 73։

40 «Մշակ», 1897, № 105։

41 Մուրացան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1951, էջ 9—70։

42 Годичный акт императорского СПб. университета за 1886, с. 94.

43 Ա. Ա. Լալայան, Նշանավոր հայ ֆիզիոլոգ Վ. Ի. Վարդանովը, Երևան, 1969, էջ 31։

մերից մեկը և 1884 թ. ունենալով 70 000 ռուբլի կապիտալ, նույն տարում օգնություն էր ցույց տալ ընդամենը 15 հայ ուսանողների, 20-ական ռուբլու չափով[44]։

Չժխտելով պետական և մասնավոր թոշակների, դրամական նպաստների դերը հայ ուսանողության որոշ մասի նյութական ապահովման գործում, պետք է, սակայն, ընդգծել մի հանգամանք ևս. շատ հաճախ առանց այն էլ սակավաթիվ այդ թոշակները բաժին էին հասնում նյութապես ապահովված ուսանողների։ Կովկասյան կոմիտեում և հայկական եկեղեցական խորհրդում թոշակների բաշխման հարցում տեղի ունեցող կամայականությունները բազմիցս քննադատության առարկա են դարձել ժամանակի հայ մամուլի և ուսանողության համար։ Ուշագրավ է, օրինակ, 1873 թ. «Մշակ»-ում զետեղված հոդվածը. «Ինչպես հայտնի է, Մոսկվայի համալսարանում և այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում կան կովկասյան թոշակառուներ, սակայն ափսոսանք է հարուցում այն, որ այդ թոշակառուները հիմնականում հարուստների որդիներ են, որոնք պետական թոշակը վատնում են ցածրահարգ զվարճությունների և թատրոնների վրա, մինչդեռ կան ոչ քիչ աղքատ ուսանողներ, որոնք ոչ միայն թոշակներ չեն ստանում, այլև ընդհանրապես զուրկ են գոյության միջոցներից»[45]։ Նույն թերթի կողմից քննադատվեց նաև հայ եկեղեցական խորհուրդը թոշակները ոչ ճիշտ բաշխելու համար[46]։

Հայ ուսանողության զգալի մեծամասնությունը ոչ մի օգնություն չստանալով պետությունից և բարեգործական կազմակերպություններից, հիասթափված թոշակների հարցում տիրող անարդարությունից, ինքն էր հոգում իր հանապազօրյա հարցը, ստեղծելով ուսանողական մի շարք կազմակերպություններ (փոխօգնության դրամարկղներ, հայրենակցական միություններ և այլն), որոնք իրենք էին տնօրինում կազմակերպված երեկույթներից և թատերական ներկայացումներից ստացվող հասույթները։ Այսպիսի կազմակերպությունների առաջնեկը դարձան 1855 թ. Մոսկվայի համալսարանի հայ ուսանողների հիմնադրած «Ուսանողական ժողով» հայրենակցական միությունը և փոխօգնության դրամարկղը[47], որոնց գոյության հիմնական նպատակը չքավոր ուսանողության նյութական օժանդակությունն էր։ Իրենց գոյության շուրջ 60 տարում այդ կազմակերպությունները կարևոր դեր խաղացին, այս կամ այն չափով թեթևացնելով ուսանողների նյութական դրությունը։ Արժանի հատուցելով փոխօգնության դրամարկղի գործունեությանը, նույն համալսարանի սան Հակոբյանցը «Մշակին» գրած նամակում այն համարում էր Մոսկվայի համալսարան գնացող չքավոր շատ ուսանողների միակ հույսը[48]։ «Ուսանողական ժողովի» նյութական բաղան հայերեն ներկայացումներից գոյացած գումարներն էին և հայ հասարակայնության նվիրատվությունները, որոնք շատ հաճախ զգալի գումար էին կազմում։ Այսպես, 1872 թ. «Մշակը» հայտնում էր. «Մոսկվայից գրում են մեզ, որ նորերումս այս քաղաքի հայ ուսանողները մի ներկայացում են տվել հոգուտ իրենց չքավոր ընկերների։ Հայոց ներկայացումից հետո տրվեց և ռուսերեն ներկայացումն, որի մեջ մասնակցել են երկու օտարազգի լենհոյդ անունով օրիորդներ և հայ օրիորդ Սալոմե Ստեփանյանը։ Նամակագիրը ասում է, որ ծախսը հանած, մնաց զուտ արդյունք 463 ռուբլի»[49]։ 1879 թ. նույն «Մշակը» նկատելի գոհունակությամբ իր ընթերցողներին հայտնում էր. «Մոսկվայի հայ ուսանողությունը հայ հասարակությանը ներկայացրեց Սունդուկյանցի «Պեպոն» և 2 վոդևիլ, ստացված զուտ շահը 600 ռ. գնաց չքավոր ուսանողներին։ Ներկայացումը ընդունվեց շատ լավ»[50]։ Դարի վերջին այդ ներկայացումներից ստացվող եկամուտը ավելի զգալի է դառնում, որ վկայում է տեղի հայ համայնքի՝ դեպի ազգային մշակույթն ունեցած հետաքրքրության աճի և միաժամանակ ուսանողների խաղամակարդակի բարձրացման մասին։ 1895 թ. «Մուրճ» հանդեսը, օրինակ, հայտնում էր. «Մոսկվայի հայ ուսանողությունը տվեց մի երեկույթ, որը շատ հաջող անցավ։ Խաղացին «Մեծապատիվ մուրացկաններ»։ Մոտ 40 հոգուց բաղկացած խումբը, բոլորն էլ հայ օրիորդներ և երիտասարդներ, ուսանող Ա. Ա. Սպենդիարյանի ղեկավարությամբ երգեցին ազգային ժողովրդական երգեր և Սպենդիարյանի «Ալ վարդ լսիր, աղաչանքս» երգը։ Զուտ արդյունք 2100 ռուբլի»[51]։ Չքավոր ուսանողության օգտին կայացած 1897 թ. Մոսկվայի

44 ГИАЛО, ф. 510, оп. 1, д. 130, л. 1—9.
45 «Մշակ», 1879, № 40։
46 «Մշակ», 1895, № 117։
47 «Մշակ», 1895, № 88։ Տե՛ս նաև Ա. Արշարունի, նշվ. աշխ., էջ 37։
48 «Մշակ», 1895, № 129։
49 «Մշակ», 1872, № 11։
50 «Մշակ», 1879, № 9։
51 «Մուրճ», 1895, № 2, էջ 348։

հայկական երեկույթը և դրան հաջորդած պարերը տվեցին ևս 2100 ռ. մաքուր եկամուտ[52]։

Չքավոր ուսանողներին օգնելու համար նման երեկույթներ էին կազմակերպում նաև Պետերբուրգի համալսարանի հայ երիտասարդները։ «Պետերբուրգի հայ ուսանողությունը 2 տարի է, որ հայկական մեծ կոտորածների պատճառով երեկույթներ չի սարքում, այլ դրա փոխարեն նվերներ է ընդունում չքավոր ընկերներին «նելու համար,— դրում էր նույն «Մուրճը»։— Պետերբուրգի հայ ուսանողության ներկայացուցիչները հրապարակեցին այդ տարվա համար ընդունած նվերների ցուցակը, որոնց դումարը կազմում էր ց 1-ն փետրվարի 1644 ռ. 70 կոպեկ (դրանցից 780 ռ. 70 կ. Պետերբուրգի հայ հասարակությունից, 575 ռ. Բաքվից, մնացածը Թիֆլիսից, Դանձակից և Աստրախանից)»[53]։

Հավաքելով զդալի գումարներ և արդարամտորեն տնօրինելով դրանք, ուսանողական կազմակերպությունները կարճ ժամանակամիջոցում վիթխարի հեղինակություն ձեռք բերեցին ուսանողության միջավայրում՝ նպաստելով ուսանողների միաբանմանը և կազմակերպվածությանը։

Տարբեր ազգերի պատկանող ուսանողական կազմակերպությունները միավորման ընդգծված միտում դրսևորելուց բացի, բացահայտորեն միջամտում էին համալսարանական ղեկավարության տնտեսական քաղաքականության որոշ քայլերին՝ ձգտելով իրենց վերհսկողությունը սահմանել ֆինանսական այլ աղբյուրների և միջոցների վրա։ Այդ երևույթը, բնականաբար, չէր կարող վրիպել համալսարանական կառավարության աչքից և շմտահոգել նրան։ Ժողովրդական լուսավորության մինիստր, հայազգի կոմս Դելյանովը, օրինակ, երկաթուղային ճանապարհների և ներքին գործերի մինիստրներին 1896 թ. հղած իր նամակում դրում էր. «Մոսկովյան ուսումնական օկրուգի ղեկավարությունը խիստ մտահոգված է ուսանողական զանազան կազմակերպությունների (հայրենակցական, կուրսային և այլն) ուսանողների վրա ունեցած իշխանության և հեղինակության աճով, բանը հասնում է այնտեղ, որ ամառային արձակուրդների ժամանակ զեմստվոների առաջարկած ժամանակավոր աշխատանքների բաշխումը ուսանողության միջև իրականացնում են բացառապես այդ կազմակերպությունները։ Անգամ եթե համալսարանական ղեկավարությունը առաջադրում է այդ աշխատանքների համար ավելի արժանավոր թեկնածուների, ապա նրանք, վախենալով գնալ այդ անօրինական կազմակերպություններին հակառակ, բացահայտորեն հրաժարվում են»[54]։ Զեմստվոները, ելնելով տնտեսական և տեղային այլ բնույթի շահախնդրություններից, այս հարցում օգնում էին ուսանողական կազմակերպություններին՝ թաքցնելով ազատ տեղերը կամ էլ ուսանողներին ընդունում էին՝ անգամ ռեկտորատին տեղյակ չպահելով։ «Մոսկվայի համալսարանի ռեկտորը,— ոչ առանց վրդովմունքի հայտնում էր Դելյանովը,— Տոմսկից ստացած նամակից է միայն իմանում, որ այնտեղ աշխատում է իրեն վստահված համալսարանից ուսանողական մի ամբողջ ջոկատ»[55]։

Այսպիսով, ուսանողական կազմակերպությունները ուսանողության նյութական ապահովման հարցում խաղում էին հույժ կարևոր, հաճախ նույնիսկ որոշիչ դեր։

Ուսանողության նյութական միջոցների հայթայթման հաջորդ ուղին, ուսմանը զուգահեռ և արձակուրդների ժամանակ կատարվող զանազան աշխատանքներն էին՝ մասնավոր ընտանիքներում և դպրոցներում դասեր տալը, պարի, երգի և երաժշտության պարապմունքները, գրասենյակային աշխատանքը, երկաթուղային ուղեկցորդությունը և այլն։ Ուսանողները աշխատում էին նաև որպես բնորդներ, երաժիշտներ զանազան զվարճավայրերում, թատրոնի ստատիստներ, թարգմանիչներ, ռեկլամային հայտարարությունների տարածողներ և այլն։ Սակայն հարկ է նշել, որ փոքրիշատե բարձր վճարվող երթուղային ուղեկցորդի աշխատանքը, բնականաբար, կարելի էր կատարել միայն արձակուրդային ամիսներին, և դա եկամուտի կայուն աղբյուր չէր կարող դառնալ։ Պարի, երգեցողության և երաժշտության դասեր կարող էին տալ, իհարկե, ոչ բոլոր ուսանողները, այնպես որ չունևոր ուսանողության մեծ մասը իր հանապազօրյա հացը վաստակում էր ռեպետիտորությամբ։ Այս առումով հատկապես դժվար էր հայ ուսանողության դրությունը, որը մասնավոր դասեր ստանալու որոշ հնարավորություն կարող էր ունենալ լոկ այն քաղաքներում, որտեղ հայկական համայնք կար։

Կողմնակի աշխատանքները, իրոք, որոշ նշանակություն ունեին ուսանողության մի մասի նյութական ապահովման և դրանով իսկ նրա ուսումնառության շարունակման գործում, բայց կյանքի սուղ պայմաններով թելադրվող այդ աշխատանքները միաժամանակ դառնում էին

---

52 «Մուրճ», 1897, № 2—3, էջ 403.

53 Նույն տեղում, էջ 404։

54 ГИАЛО, ф. 14, оп. 2, д. 1074, 2—2 об.

55 Նույն տեղում, թ. 3։

խոչընդոտ ուսման առաջադիմության ճանապարհին։ Այդ մտայնությունը արձագանք էր գտել ուսանողների հինքնակենսագրականներում, որոնցում նրանք մեծ ափսոսանքով էին հիշում ամենօրյա այն 4—5 ժամը, որ իրենք ստիպված էին եղել հատկացնել մասնավոր դասերին[56]։

Այսպիսով, նախասովետական շրջանի ինչպես հայ, այնպես էլ այլ ազգերին պատկանող ուսանողության բացարձակ մեծամասնությունը ապրել և սովորել է նյութական անապահով պայմաններում՝ չստանալով ոչ մի օգնություն ոչ պետությունից և ոչ էլ ազգային բարեգործներից։ Նրանցից շատերը զբաղվում էին կողմնակի աշխատանքներով կամ էլ, չգտնելով այդպիսին, ստիպված կիսատ էին թողնում ուսումը։

Հայ և ռուս ժողովուրդների բարեկամական կապերի հիշարժան էջերից է ռուս առաջադեմ հասարակայնության օգնությունը հայ ուսանողներին։ Այդ հասարակայնությունը բազմիցս եղբայրական օգնության ձեռք է մեկնել կարիքավոր հայ ուսանողներին։ 1899 թ. «Մշակը» հայ ընթերցողներին տեղեկացնում էր, թե Կիևի դրամատիկական թատրոնի դերասան Բագրովը կազմակերպել է գրական-երաժշտական երեկույթ, որի ամբողջ հասույթը՝ 170 ռուբլի, նվիրաբերել է հայ ուսանողներին[57]։

Ապրելով և սովորելով բազմազգ ուսանողության միջավայրում հայ ուսանողությունը շատ ու շատ թելերով կապված էր ռուսական կյանքին և իրականությանը։ Ունենալով ընդհանուր շահեր ու ցանկություններ, ռուսաստանյան համալսարանների բազմազգ ուսանողությունը ուսումնառության տարիների ընթացքում հասցնում է դառնալ մի միաձույլ զանգված։ Շահերի ընդհանրության դրսևորումներից էին, օրինակ, ընդհանուր փոխօգնության դրամարկղները, միասնական երեկույթները և այլն։ Շահերի ընդհանրության գիտակցումը հանգեցրեց նրան, որ 1889 թ. Մոսկվայի համալսարանում առաջացավ ուսանողական ընդհանուր կազմակերպություն, որը կրում էր Միութենական խորհուրդ անունը։ Այն կազմակերպվեց ուսանողական բոլոր հայրենակցական միությունների ներկայացուցիչներից։ Խորհուրդը քայլ առ քայլ ուժեղանում էր, դառնում հասարակական կշիռ ունեցող կազմակերպություն և դուրս էր գալիս համալսարանի ուսանողական շարժման սահմաններից։ 1896 թ. Միութենական խորհուրդն արդեն հանդես էր գալիս որպես 45 ուսանողական հայրենակցական միությունների գործադիր մարմին, որի ձեռքին էր կենտրոնացված մի քանի հազար ուսանողների կազմակերպական ղեկավարման գործը։

Հայ և մյուս ազգերին պատկանող ուսանողության միջև ստեղծվում էին ընկերական, շատ դեպքերում եղբայրական փոխհարաբերություններ։ Վառ օրինակ կարող է ծառայել հետևյալ փաստը։ 1868 թ. տիֆով վարակվեց և մահացավ Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետի վերջին կուրսի ուսանող Ց. Նազարյանցը։ Թաղման արարողության ժամանակ Նազարյանցի հայրը ջերմ շնորհակալություն հայտնեց իր որդու ռուս ընկերներին, որոնք «զօր ու գիշեր անցկացրին իր որդու անկողնու մոտ, ձգտելով գեթ փոքր ինչ թեթևացնել նրա ծանր դրությունը»։ Մամուլում հրապարակված մահախոսականում ուսանողներից մեկը գրում էր. «Ուսանողներ Լուկյանովի, Լևենշտեյնի, Ալեքսեևի, Սեչուկովի անունները երկար կմնան ուսանողների հիշողության մեջ։ Ջերմ երախտագիտությամբ եմ հիշում նաև բժիշկ Գ. Կոլեսովին, որն ամեն օր այցելում էր հիվանդին առանց որևէ դրամական հատուցման հույսի»[59]։ Իրենց հերթին հայ ուսանողներին խորապես հուզում էին ռուսական ներքին կյանքում տեղի ունեցող իրադարձությունները։ Նրանք շատ անգամ եղբայրական օգնություն էին ցույց տալիս ոչ միայն կարիքավոր ռուս ուսանողներին, այլև, ցուցաբերելով բարձր ինտերնացիոնալիզմ, օգնում են 1892 թ. երաշտից տուժած նահանգների սովյալներին, նրանց օգտին հրատարակելով սեփական և թարգմանված հոդվածների ժողովածու[59]։ Օգնությունը մեծ չէր, սակայն նրա գոյության փաստն իսկ արդեն հայ և ռուս ժողովուրդների բարեկամության մի վառ վկայություն է։

Հանրագումարի բերելով վերևում ասվածը, կարելի է եզրակացնել, որ XIX դ. II կեսին Մոսկվայի և Պետերբուրգի համալսարանները դառնում են հայ մտավորականության պատրաստման հիմնական դարբնոցներ, որոնցում սովորող հայ ուսանողության քանակը, չնայած գոյություն ունեցող խոչընդոտներին, դարավերջին կազմում է այն ժամանակվա համար պատկառելի թիվ։ Միաժամանակ ակնհայտ է, որ ցարական կառավարության՝ ժողովրդական լուսավորության բնագավառում վարած ընդգծված դասային ֆինանսական քաղաքականությունը

[56] ЦГИАМ, ф. 418, оп. 76, д. 373, л. 4.

[57] «Մշակ», 1899, № 202։

[58] «Հայաստան աշխարհ», 1868, № 2—3, էջ 110։

[59] «Մշակ», 1892, № 26։

խոչընդոտ է հանդիսացել ժողովրդական լայն խավերի ծոցից ելած հարյուրավոր, այդ թվում նաև հայ երիտասարդների համար համալսարանական կրթություն ստանալու ճանապարհին։ Ուսանողության մի ստվար մասի նյութական անապահով վիճակը ծնել է նաև մեկ այլ բացասական երևույթ՝ նրանց մի զգալի մասը կիսատ է թողել ուսումնառությունը։

МАТЕРИАЛЬНОЕ ПОЛОЖЕНИЕ И СРЕДСТВА АРМЯНСКИХ СТУДЕНТОВ В МОСКОВСКОМ И ПЕТЕРБУРГСКОМ УНИВЕРСИТЕТАХ (вторая половина XIX в.)

Б. Б. МАНУКЯН

Резюме

Архивные документы и данные опубликованной литературы показывают, что начиная с 50-ых годов XIX в. численность студентов армян в Московском и Петербургском университетах неуклонно росла. Этот процесс явился результатом присоединения Восточной Армении к России и обусловливался позитивными сдвигами в социально-экономической жизни армянского народа после присоединения. Численность студентов армян в российских университетах могла быть значительно выше, если бы классовая политика царизма в области народного образования, а также материальная необеспеченность значительной части армянских студентов не препятствовали бы этому процессу.

Материальные источники армянских студентов, кроме материальной поддержки со стороны родителей, условно можно подразделить на четыре группы: 1. государственные стипендии и пособия; 2. финансовая помощь, оказанная различными армянскими общественными организациями; 3. сумма, получаемая от различных мероприятий; 4 денежные средства, которые студенты зарабатывали, давая частичные уроки, и во время каникул.